

ՔԱՅԼ 1.

ՍԵՐԸ ՀԱՄԲԵՐՈՂ Է

Այս բաժնում կխոսենք համբերության կարևորության, սիրո և սիրահարության տարբերությունների, ամուսնության նպատակի, երջանկության, հետամուսնական դժվարությունների և դրանց դիմակայելու համար անհրաժեշտ երկու «գենքերի» մասին:

1. Համբերությունը կյանք է

Աշխարհում այսօր ապրում է շուրջ 7 միլիարդ մարդ, և նրանց բոլորին էլ հատուկ է սիրո զգացումը: Այդ 7 միլիարդից մեկն էլ դու ես:

Միանգամից ասեմ, որ եթե դու պատկանում ես շատ զբաղված մարդկանց շարքին, տրամադրվածություն ու համբերություն չունես մինչև վերջ կարդալու այս գիրքը, կարող ես հենց հիմա փակել այն և իզուր չվատնել ժամանակդ: Այս գիրքը ճիշտ և ճիշտ համբերություն ունեցող մարդու համար է, նրա համար, ով ցանկանում է Աստծո օգնությամբ հասնել փափագելի երջանիկ կյանքին և բարելավել իր ընտանեկան կյանքը: Ինչպես Աստծո Խոսքն է ասում. *«Ով համբերի, կյանք կունենա»*[1]: Ընտանիքում համբերատար լինելու մասին մենք ավելի ուշ պիտի խոսենք: Հիմա ուզում եմ խնդրել, որ տրամադրվես այս գրքի՝ քո առջև բացած ճանապարհը համբերությամբ անցնելուն: Ես հավատացած եմ, որ քո և քո ընտանիքի համար մեր այս ճամփորդությունը շատ կարևոր է, եթե պատրաստ ես այն անցնել լրջությամբ և համբերությամբ զինված: Երբ ասում եմ համբերություն, նկատի չունեմ կրավորական, ժամանակն անպտուղ սպանող ապաստողական կեցվածքը: Համբերությունն այն մոգական ուժն է, որը մղում է մարդուն անդադար աշխատելու, զարգացնելու, աճեցնելու և բարելավելու այն, ինչը կարևոր է իր համար: Մի առակ պատմեմ.

Մի մարդ փողոցով անցնելիս նկատում է զարմանալի մի խանութ, որի ճակատին մեծ տառերով գրված էր՝ «ԱՍՏԾՈ ԽԱՆՈՒԹ»: Ներս մտնելով պարզում է, որ այս

խանութից կարող է գնել ինչ որ ցանկանա:

— Եթե այդպես է,— ասում է նա,— ինձ տվեք 3 կիլոգրամ երջանկություն, 7 լիտր առողջություն, 10 տուփ էլ սեր:

— Շատ լավ,— պատասխանում է վաճառող հրեշտակը,— սպասե՛ք, հիմա պահեստից կբերեմ:

Վերադառնալով հրեշտակը մարդուն է փոխանցում մի փոքրիկ տուփ:

— Սա ի՞նչ է,— զարմանում է մարդը,— ես մեծ-մեծ պատվերներ եմ տվել, իսկ դուք ինձ միայն այս տո՞ւփն եք տալիս:

— Եղբա՛յր,— ժպտադեմ պատասխանում է հրեշտակը,— Աստծո խանութում կարելի է ձեռք բերել միայն սերմերը, իսկ դրանք ցանելը, ջրելը և համբերությամբ մշակելը քո գործն է:

Լա՛վ հիշիր այս պատմությունը, քանի որ գրքի վերջում մենք դրան դարձյալ անդրադառնալու ենք, բայց սկզբի համար միշտ մտքումդ պահիր, որ դու էլ Աստծուց սերմեր ունես ստացած, որոնք աճեցնելու և պտուղ քաղելու համար անհրաժեշտ է համբերություն:

Առհասարակ, օրինաչափ է, որ մարդը լուրջ ու կարևոր նպատակներին համբերությամբ մոտենա: Օրինակ՝ ոմանք կարող են հիշել, թե տարիներ շարունակ որքա՛ն համբերատար են աշակերտել դպրոցական սեղանի առաջ, ի՛նչ տիտանական համբերություն են ցուցաբերել, երբ պատրաստ-

վել են համապարանական քննություններին, ինչպիսի՛ համբերությամբ են ամեն անգամ նոր ու կարևոր գործնական հարաբերություններ կառուցել աշխատավայրում... Արի՛ ընդունիր, որ սերը, ընտանիքը, երջանկությունը և ՆԱ շատ ավելի արժանի են նման համբերության:

«ՆԱ՞»,— զարմացար երևի: Այո՛, գլխատառերով գրված ՆԱ շատ ես հանդիպելու այս էջերում: ՆԱ քո կողակիցն է, քո կյանքի ընկերը, սիրելիդ, քո կեսը, ՆԱ, ում հետ կապել ես կյանքդ, երազանքներդ, երջանկությունդ, ներկադ և ապագադ: Դու և ՆԱ այս գրքի հերոսներն եք, իսկ այս գիրքը՝ պարզապես մի ցուցանակ ձեր երջանկության ճանապարհին, ցույց տալու համար, թե ինչ է Աստված պատմում իրական սիրո մասին, այն ՍԻՐՈ, ՈՐԸ ԵՐԲԵՔ ՉԻ ԱՆՀԵՏԱՆՈՒՄ:

2. Երբ սիրահար էիք

Ճի՛շտն ասա, մի փոքր հեգնանքով ընդունեցիր չէ՞ ասածս. «Սերը երբեք չի անհետանում»: Հասկանում եմ քեզ. մարդը սերն այսօր շատ է արժեզրկել: Սիրային բազմաթիվ կապեր կան, որոնք քանդվում են, շատ ընտանիքներ չեն էլ հասցնում կառուցվել, հարաբերություններ էլ կան, որ ավելի լավ է չլինեին, քան... Կարող է պատահել քո՛ ընտանեկան բույնն էլ սիրո կատարյալ վայելքի օրեր չի ապրում, բայց արի չշտապենք գնահատական տալ, այլ մտովի վերադառնանք դեպի ձեր կյանքի ամենահենթ տարիները: Վերհիշի՛ր քո և ՆՐԱ առաջին հանդիպումը. «Բույլ մը նայ-